# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**13 փետրվարի 2024 թվական, N 14-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 15 ՓԵՏՐՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի, 34-րդ հոդվածի՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու և հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու մասին» թիվ 3-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | [signature] | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | [signature] | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ՁԱԽԱՐՈՎ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի
ավագանու 2024 թվականի փետրվարի 13-ի
N 14-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

## 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1. Դավիթ Ղումաշյան - հանձ. անդամ. ՔՊ խմբակցություն
2. Նարինե Թորոսյան - հանձ. անդամ. ԱԵ խմբակցություն
3. Արկադի Թամազյան - հանձ. անդամ. ԱԵ խմբակցություն
4. Արթուր Դավթյան - հանձ. անդամ. ԱԵ խմբակցություն
5. Հարություն Ջավարյան - հանձ. անդամ. ՔՊ խմբակցություն
6. Հրանտ Հախվերդյան - հանձ. անդամ. ՔՊ խմբակցություն
7. Մկրտիչ Մարգարյան - հանձ. անդամ. ՔՊ խմբակցություն

## 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1. Անդրանիկ Թամազյան - հանձ. անդամ. ԱԵ խմբակցություն
2. Աբել Տիտանյան - հանձ. անդամ. ԱԵ խմբակցություն
3. Արկադի Թամազյան - հանձ. անդամ. ԱԵ խմբակցություն
4. Դավիթ Ղումաշյան - հանձ. անդամ. ՔՊ խմբակցություն
5. Համլետ Ղուլյան - հանձ. անդամ. ՔՊ խմբակցություն
6. Դավիթ Սարգսյան - հանձ. անդամ. ՔՊ խմբակցություն
7. Հարություն Ջավարյան - հանձ. անդամ. ՔՊ խմբակցություն

## 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1. Տիգրան Պապոյան - հանձ. անդամ. ՀԱԿ խմբակցություն
2. Անահիտ Բադալյան - հանձ. անդամ. ԱԵ խմբակցություն
3. Թագուհի Վարոսյան - հանձ. անդամ. ԱԵ խմբակցություն

4. Գայանե Ալլահվերդյան - հանձ. անդամ. ԱԵ խմբակցություն
5. Արեն Դալլաքյան - հանձ. անդամ. ՔՊ խմբակցություն
6. Արմինե Երիցյան - հանձ. անդամ. ՔՊ խմբակցություն
7. Արտակ Գևորգյան - հանձ. անդամ. ՔՊ խմբակցություն

## 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1. Սիմոն Զախարով - հանձ. անդամ, ավագանու անդամ
2. Սենիկ Չերչինյան - հանձ. անդամ. ԱԵ խմբակցություն
3. Աբել Տիտանյան - հանձ. անդամ. ԱԵ խմբակցություն
4. Մկրտիչ Մարգարյան - հանձ. անդամ. ՔՊ խմբակցություն
5. Լորա Սարգսյան - հանձ. անդամ. ՔՊ խմբակցություն
6. Հարություն Ջավարյան - հանձ. անդամ. ՔՊ խմբակցություն
7. Տելեմակ Աղվանյան - հանձ. անդամ. ԱԵ խմբակցություն

## 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1. Արամ Ռամազյան - հանձ. անդամ. ԱԵ խմբակցություն
2. Արկադի Թամազյան - հանձ. անդամ. ԱԵ խմբակցություն
3. Մանվել Ռամազյան - հանձ. անդամ. ԱԵ խմբակցություն
4. Ֆլորա Թաթուխաշվիլի - հանձ. անդամ. ՔՊ խմբակցություն
5. Անահիտ Սմբատյան - հանձ. անդամ. ՔՊ խմբակցություն
6. Հայկ Հովակիմյան - հանձ. անդամ. ՔՊ խմբակցություն
7. Հարություն Ջավարյան - հանձ. անդամ. ՔՊ խմբակցություն

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**13 փետրվարի 2024 թվական, N 15-Ա**

### ՄԵԿ ԱՄԻՍ ԱՆԸՆԴՄԵՋ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՉՀԱՃԱԽՈՂ ՍԱՆԵՐԻՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ՉԳԱՆՁԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող մանկապարտեզներ մեկ ամիս (30 օր) անընդմեջ չհաճախող սաներից ծնողական վճարներ չգանձելուն (նշված ժամանակահատվածի համար համապատասխան բուժհաստատությունից համապատասխան տեղեկանք ներկայացնելու դեպքում):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՋԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ՋԱԽԱՐՈՎ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**13 փետրվարի 2024 թվական, N 16-Ա**

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ՝ 06-002-0038-0477 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ, ԱԶԱՏ ՍԱՄԱԴԻ ՄԱԿԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՂԱՎԱՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հողային օրենսգքրի 63-րդ հոդվածի 2-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 12.04.2001թ. N 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով Ազատ Սամադի Մակարյանի դիմումը, Ալավերդու քաղխորհրդի գործկոմի 29.09.1997թ. թիվ 156 որոշման հիման վրա ստացած սեփականության վկայագիրը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքային սեփականություն համարվող, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաքի կադաստրային քարտեզի 06-002-0038-0477 ծածկագրից առանձնացվող, Զորավար Անդրանիկ (նախկինում՝ Կոմերիտմիության) փողոցում գտնվող տաղավարի զբաղեցրած՝ 0.00266 հա մակերեսով հողամասը 49947 /քառասունինը հազար ինը հարյուր քառասունյոթ/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով, օտարել տաղավարի սեփականատեր հանդիսացող՝ Ազատ Սամադի Մակարյանին որպես օրենքով գնման նախապատվության իրավունք ունեցող անձ:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ՉԱԽԱՐՈՎ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ

Գյուղի անվանումը [illegible]

Հասցեն [illegible]

Սեփականության ձևը (ընդհանուր համատեղ, ընդհանուր բաժնեմասային) ____

Սեփականատեր (եր) [illegible]

## ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Գրանցված է սեփականության իրավունքով պատգամավորների [illegible] քաղաքային շրջանային

խորհրդի գործկոմի «29» 09 1997թ. որոշման հիման վրա

Գրանցման գիրք 5-69

Գյուղացիական կազմակերպության ղեկավար [illegible] 28.10.97

Ա 002123

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | [illegible] | [illegible] | 1997 | | [illegible] | [illegible] | [illegible] | + | — | — | — | | 771 | 14633.0 | — | [illegible] |

Հողամասի մակերեսը [illegible]

Սահմանը [illegible]

Սեփականատիրոջ և ընտանիքի անդամների անձնագրային տվյալները (անձնագրի տվյալները)

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ

Հողամասի հատակագիծ Մ 1:

| Հողամասի բաղադրիչը | | |
|---|---|---|
| Սահմաններ | | |
| Ըստ փաստաթղթերի Փաստացի Չափագրմամբ Մայիսի Մայիսյան | Հող | Այգի |
| | | |
| | | |

Շինությունների հատակագիծ Մ 1:




| | | Բնակարան-ների թիվը | Բնակելի սեն-յակների թիվը | Ընդհանուր մակերես Մ.Ք. 24,5 | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Բնակելի | Օժանդակ | |
| Բաժանարար | Հարկեր | | | | | |
| | | | | 24,5 | | |
| | | | | | | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**13 փետրվարի 2024 թվական, N 17-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 122-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետով, 34-րդ հոդվածով՝

համայնքի ավագանին ***որոշում է .***

1. Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի կադաստրային քարտեզի 06-060-0222-0029 ծածկագրում գտնվող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին» N 122-Ա որոշման 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը. «98680 (իննսունութ հազար վեց հարյուր ութսուն)» թվերը և բառերը փոխարինել «110561 (մեկ հարյուր տասը հազար հինգ հարյուր վաթսունմեկ)» թվերով և բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՁԱՎԱՐՅԱՆ | | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | | | |
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ՁԱԽԱՐՈՎ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**13 փետրվարի 2024 թվական, N 18-Ա**

## «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ Ե. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՋՐԱՎԱԶԱՆ ՓՈՂՈՑԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ՀԱՍՑԵՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԾ-Ի ԱԼԱՎԵՐԴԻ ՏԿ-Ի ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու նիստում քննարկման է դրվել Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Ջրավազան 7/1 հասցեում ՄԾ-ի Ալավերդի ՏԿ-ի շենքի կառուցման շինարարություն իրականացնող կազմակերպությանը՝ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն), 2019 թվականի ապրիլի 08-ին տրված թիվ 09 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու հանգամանքով պայմանավորված, վարչական տույժի ենթարկելու հիմքերի առկայության հարցը, որի քննարկման համար հիմք է հանդիսացել Ընկերության կողմից շին. աշխատանքների կատարման ժամկետը խախտելու վերաբերյալ 01.02.2024թ. դիմում-հիմնավորումը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղարի կողմից լիազորված անձ՝ «ՀայԳյուղՇինՆախագիծ» ՍՊ ընկերության կողմից 19.01.2024թ. N ՎՀ-05 դիմումը շին. թույլտվության ժամկետը երկարաձգելու մասին: Ընկերությունը 2024 թվականի փետրվարի 1-ին դիմել է Ալավերդի համայնքի ղեկավարին՝ խնդրելով երկարաձգել վերոնշյալ շինարարության թույլտվության ժամկետը մինչև 01.06.2024 թվականը: Դիմումով ներկայացվել է բացատրություն-հիմնավորում, որով ներկայացվել են շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետն Ընկերության կողմից պահպանվելու անհնարինության և ժամկետը չպահպանելու պատճառների հարգելիության մասին Ընկերության փաստարկները և հիմնավորումները:

Իր հիմնավորման մեջ Ընկերության տնօրենը վկայակոչել է, որ ՄԾ-ի Ալավերդի ՏԿ-ի շենքի կառուցման աշխատանքները ձեռք է բերվել 06.02.2020թ. կնքված SPAP II W-1.1.1/1.TC պայմանագրով, որով սահմանված ժամկետները խախտվել են անկախ իր մեղքից՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման լրջագույն վտանգով: ՀՀ Կառավարության 16 մարտի 2020 թվականի N 298-Ն որոշմամբ, 2020 թվականի մարտի 16-ից մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը հայտարարված է եղել արտակարգ դրություն, որից հետո համաճարակային իրավիճակը շարունակել է մնալ լարված, հիվանդությունը ստացել է լայնածավալ տարածում, և երկրում առաջացել է համաճարակ, այնուհետև ՀՀ կառավարության 11

սեպտեմբերի 2020 թվականի N 1514-Ն որոշմամբ, 2020 թվականի սեպտեմբերի 11-ից մինչև 2021 թվականի հուլիսի 11-ը սահմանվել է կարանտին: Նշված հանգամանքներով պայմանավորված՝ շուրջ 2 տարի շարունակ Հայաստանի Հանրապետությունում սահմանված են եղել տեղաշարժվելու և տնտեսական գործունեություն իրականացնելու ազատությունների էական սահմանափակումներ, որոնք էապես խոչընդոտել են մինչ այդ իրավական ռեժիմների առաջացումը պլանավորված շինարարության իրականացումն ու ավարտը այն ժամկետներում, որոնք ի սկզբանե պլանավորվել են ու համարվել իրատեսական:

Ընկերության տնօրենը վկայակոչել է նաև 2020 թվականի սեպտեմբերի 27-ից սկսված պատերազմը և դրանով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետությունում ՀՀ Կառավարությաքն 27 սեպտեմբերի 2020 թվականի N 1586-Ն որոշմամբ հայտարարված ռազմական դրությունն ու զորահավաքը, որոնք ևս էապես վնասել են իրականացվող շինարարության իրականացմանը և ոչ պակաս խոչընդոտներ են առաջացրել շինարարության համար, ընդ որում՝ խոչընդոտները պատերազմի ավարտով չեն ավարտվել և շարունակվել են նաև հետպատերազմական շրջանում՝ առնվազն մինչև 2021 թվականի հուլիս ամիսը, այսինքն՝ ներառել են նաև երկրորդ շինարարական սեզոնի զգալի մասը:

Փաստորեն, Ընկերությունը տնօրենի պնդմամբ, գրեթե ամբողջությամբ զրկվել է պլանավորված շինարարության ժամկետում ներառված երկու սեզոններից մեկում շինարարություն իրականացնելու հնարավորությունից, ինչը և անհնարին է դարձրել շինարարության ավարտը նախապես պլանավորված ժամկետներում:

Այսպիսով, Ընկերության դիրքորոշումն այն է, որ շինարարության թույլտվությամբ սահմանված 24-ամսյա ժամկետից ավելի քան 15 ամսվա ընթացքում Ընկերությունը փաստացի զրկված է եղել շինարարությունը լիարժեք ծավալներով իրականացնելու հնարավորությունից, ինչը պայմանավորված է եղել Ընկերության մեղքից անկախ առաջացած հանգամանքներով, Ընկերության բնորոշմամբ՝ ֆորս-մաժորային իրավիճակով, որը ներառել է շինարարության թույլտվության ժամկետում ներառված ամենաբարենպաստ ժամանակահատվածի մեծ մասը և այդպիսով անհնարին է դարձրել շինարարության ավարտն այն ժամկետում, որը նշված է շինարարության թույլտվության մեջ:

Վերոգրյալի հաշվառմամբ Ընկերությունը խնդրել է հաստատված համարել, որ տեղի ունեցած ժամկետի չպահպանման մեջ բացակայում է Ընկերության մեղքը և այդ հիմքով զերծ մնալ Ընկերության նկատմամբ վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելուց:

Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը չպահպանելու համար իրավական պատասխանատվություն է սահմանված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1 հոդվածով, այսինքն՝ տվյալ արարքը դասակարգված է որպես վարչական զանցանք, ուստի դրա առկայությունը պարզելու և վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու հարցը քննարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել, թե անձի գործողություններում առկա՞ է արդյոք նրա մեղքը, որը հանդիսանում է զանցանքի առկայության և պատժելիության առանցքային նախապայման:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, ***մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը***, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկով արձանագրել է, որ **վարչական պատասխանատվության սկզբունքներից է «պատասխանատվությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ: Հետևաբար՝ մեղքը, որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր, հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը** (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ ՍԴՈ-920 որոշումը):

ՀՀ սահմանադրական դատարանն այլ դեպքում անդրադառնալով վարչական իրավախախտման սուբյեկտի մոտ մեղքի հնարավոր տարատեսակներին ու դրանց բովանդակությանը՝ արձանագրել է, **որ սուբյեկտը մի դեպքում՝ դիտավորությամբ, մեկ այլ դեպքում՝ անզգուշությամբ զանցանք կատարելիս գիտակցում է», «կանխատեսում է» իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը** (տե՛ս՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ ՍԴՈ-1048 որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը, կրկին անդրադառնալով իրավական պատասխանատվության միջոցների իրավաչափությանը, **ոչ իրավաչափ է համարել անձի կողմից բացասական հետևանքների կրումը՝ իր մեղքից անկախ պատճառով:** Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը զարգացրել է ՍԴՈ-920 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը ձևակերպել, որ պատասխանատվության հանրային-իրավական սկզբունքների, այդ թվում՝ **մեղքի առկայությունն անհրաժեշտ է ոչ միայն վարչական, այլև, ընդհանրապես, իրավական պատասխանատվության ցանկացած միջոցի կիրառման համար** (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2014 թվականի հունիսի 03-ի թիվ ՍԴՈ-1153 որոշումը):

Անդրադառնալով «անհաղթահարելիուժ» եզրույթին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով (տե՛ս «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՍՊԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):

Այսպիսով, Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների վերոնշյալ իրավական դիրքորոշումների և վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունը վկայում է, որ իրավական պատասխանատվության ցանկացած միջոցի, ներառյալ՝ վարչական տույժի կիրառումը, հնարավոր և թույլատրելի է բացառապես այն դեպքում, երբ ենթադրյալ իրավախախտումը թույլ է տրվել համապատասխան սուբյեկտի մեղքով: Իսկ անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով պարտականությունների պատշաճ կատարման անհնարինության ապացույցը բացառում է մեղքի (դիտավորյալ կամ անզգույշ) առկայությունը:

Տվյալ դեպքում, քննարկելով Ընկերության դիմումը, լսելով Ընկերության փաստարկները և հիմնավորումները անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով շինարարության իրականացման ժամկետի խախտման վերաբերյալ, հիմք ընդունելով վերոնշյալ իրավանորմերը և Սահմանադրական դատարանի մեկնաբանությունները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման

մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածով՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊ ընկերության կողմից Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Ջրավազան փողոցի արևմտյան մասում 2019թ. ապրիլի 08-ի թիվ 09 շինարարության թույլտվության հիման վրա իրականացվող ՄՍԾ-ի Ալավերդի ՏԿ-ի շենքի կառուցման շինարարությունը սահմանված ժամկետում չավարտելու պատճառները համարել հարգելի՝ պայմանավորված անհաղթահարելի ուժի առկայությամբ և դրանով իսկ հաստատված համարել, որ ընկերության մեղքը ստեղծված իրավիճակում բացակայում է:
2. Առաջարկությամբ դիմել Ալավերդի համայնքի ղեկավարին և ողջ աշխատակազմին՝ առաջարկելով զերծ մնալ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊ ընկերության նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1 հոդվածի հատկանիշներով վարույթ հարուցելուց և ընկերության նկատմամբ վարչական տույժ կիրառելուց:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդ օրվանից:

| | | | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|---|---|
| | ԴԱՎԻԹ | ՂՈՒՄԱՇՅԱՆ | [signature] | | |
| 2. | ԼՈՐԱ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| 3. | ՀԱՄԼԵՏ | ՂՈՒԼՅԱՆ | [signature] | | |
| 4. | ԱՐՄԻՆԵ | ԵՐԻՑՅԱՆ | [signature] | | |
| 5. | ՄԿՐՏԻՉ | ՄԱՐԳԱՐՅԱՆ | [signature] | | |
| 6. | ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | ՋԱՎԱՐՅԱՆ | [signature] | | |
| 7. | ՖԼՈՐԱ | ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ | [signature] | | |
| 8. | ԴԱՎԻԹ | ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | | |
| 9. | ՀՐԱՆՏ | ՀԱԽՎԵՐԴՅԱՆ | [signature] | | |
| 10. | ԱՆԱՀԻՏ | ՍՄԲԱՏՅԱՆ | [signature] | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11. | ԱՐՏԱԿ | ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| 12. | ԱՐԵՆ | ԴԱԼԼԱՔՅԱՆ | | | |
| 13. | ՀԱՅԿ | ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | | | |
| 14. | ՍԻՄՈՆ | ԶԱԽԱՐՈՎ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

# «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ»

## ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան Նուբարաշեն 11փ. 21-26
հեռ՝ 094 27 77 93, 010 57 17 60

*ՀՀ Լոռու մարզի*

*Ալավերդի համայնքի ղեկավար*

*պարոն Դ.Ղումաշյանին*

Գրություն

Հարգելի պարոն Ղումաշյան.

Համաձայն 06.02.2020թ.-ին կնքված SPAP II W-1.1.1/1.TC պայմանագրի, մեր կազմակերպությունն իրականացնում է ՄԱԾ-ի Ալավերդի ՏԿ-ի կառուցման աշխատանքները:

Հայտնում ենք, որ շինաշխատանքները պայմանագրով սահմանված ժամկետում չենք ավարտել, քանի որ դրանց իրակնացման ընթացքում մեր հանրապետությունում տեղի են ունեցել ֆորս-մաժորային իրավիճակներ: Կառավարության 16 մարտի 2020 թվականի N 298-Ն որոշմամբ 16.03.2020 թվականից մինչև 11.09.2020 թվականը՝ 6 ամիս, հանրապետությունում հայտարարվել է արտակարգ դրություն կապված, որի ընթացքում դադարեցվել են բոլոր տեսակի աշխատանքները, համաձայն ՀՀ կառավարույան 11 սեպտեմբերի 2020 թվականի N 1514-Ն որոշման 11.09.2020 թվականից մինչ 20.06.2022 թվականը ներառյալ սահմանված է կարանտին, որը էապես դժվարացնում է աշխատանքների իրականացումը: 27.09.2020 թվականին սկսվել է 44 օրյա պատերազմը և ՀՀ կառավարության 27 սեպտեմբերի 2020 թվականի N 1586-Ն որոշմամբ հայտարարվել է ռազմական դրություն ու զորահավաք: Պատերազմի ընթացքում և դրան հաջորդած ամիսներին ամբողջությամբ խաթարվել է աշխատանքների իրականացումը: Ուզում ենք նշել, որ արտակարգ դրությունը և պատերազմը տեղի են ունեցել շինարարության համար բարենպաստ ժամանակահատվածում:

Հաշվի առնելով վերոնշյալը հայտնում ենք, որ մեր կազմակպությունը միտումնավոր չէ աշխատանքների կատարման պայմանագրային ժամկետը խախտել: Խնդրում ենք Ձեզ 08.04.2019 թվականին տրված N 09 շինթույլտվության ժամկետը երկարացնել մինչև 01.06.2024 և կազմակերպության վարչական պատասխանատվության չենթարկել հաշվի առնելով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածը՝ Վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվությունը, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ ՍԴՈ-920 որոշումը, 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ ՍԴՈ-1048 որոշումը և 2014 թվականի հունիսի 03-ի թիվ ՍԴՈ-1153 որոշումը:

Հարգանքով տնօրեն Ե.Գևորգյան

25.01.2024թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Զ.Անդրանիկի 8/1, Հեռ. (0253) 2-41-00
Էլ. փոստ՝ Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

N ԱՀ-0256/24
*23 հունվար 2024թ.*

***«ՀԳՇՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ***
***Վ. ՀՈՎԱՍԱՓՅԱՆԻՆ***

Հարգարժան պարոն Հովասափյան.

Ի պատասխան Ձեր՝ 19/01/2024թ. ՎՀ-05 գրության.

Հայտնում ենք, որ ավարտված, արդեն իսկ շահագործվող շինության համար շինարարության թույլտվության երկարաձգում չի կարող տրամադրվել, քանի որ, ՀՀ օրենսդրության համաձայն, շինարարության թույլտվության երկարաձգում կատարվում է նախկինում տրամադրված և ժամկետի մեջ թույլտվության դեպքում: Ձեր կողմից նշված օբյեկտի շինարարության թույլտվության ժամկետն ավարտվել է 2021թվականին: Խնդրում ենք գրավոր հիմնավորել սահմանված ժամկետում շինարարության երկարաձգման համար չդիմելու պատճառները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

*Կատ. Պայմանագրային աշխատող՝ Շ. Քառյան*

ՀԳՇՆ
ՀԱՅԳՅՈՒՂՇԻՆՆԱԽԱԳԻԾ
HGSN

ՆԱԽԱԳԾՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ . Urban Design

ՏՆՕՐԵՆ

№ [illegible]-05
19 01 2024

ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Համայնքապետ
Պարոն Դ. Ղումաշյանին

Հարգելի պարոն Ղումաշյան,

Տեղեկացնում եմ, որ բազմիցս խնդրանքով դիմել ենք ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքի համայնքապետարան, վերջինը 2023թ.-ի հոկտեմբերի 16-ի թիվ ՎՀ-213 գրությամբ, որ ՀՀ Լոռու մարզի Ալավերդու ՀԱԾՏԿ թիվ 09 08.04.2019թ.-ի տրված շինարարության թույլտվության տևողության ժամկետը երկարաձգվի մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը, հաշվի առնելով, որ կառույցի շինարարական աշխատանքները ամբողջությամբ ավարտված են և ՀԱԾՏԿ աշխատակազմը տեղում գործում է:

Հարգանքով՝

Վ. Հովսափյան

ՀՀ 0028 Երևան, Կիևյան 16
Kievian Str. 16, Yerevan 0028 RA
(010) 274 307
E-mail: hgsnvh@gmail.com
http://www.hgshn.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«09» հունվար 2024 թ. N Ք/ԱՇ/213-24

# ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 700-Լ որոշմամբ հաստատված Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կանոնադրության 26-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով, նախարարության գլխավոր քարտուղար՝ Սամվել Պարույրի Մուրադյանս (հանրային ծառայությունների համարանիշ 1104630109, նույնականացման քարտի համար՝ 007350572, տրված՝ 09.03.2016 թ., 005-ի կողմից), հիմք ընդունելով 2015թ.-ի հուլիսի 22-ի թիվ SPAP II C-3.1.1.a, 2018թ.-ի հունիսի 20-ի թիվ SPAP 2-C-3.1.1.j և 2018 թ.-ի հուլիսի 20-ին կնքված SPAP 2-C-3.1.1l պայմանագրերը (այսուհետ՝ Պայմանագիր), լիազորում եմ «ՀայԳյուղՇինՆախագիծ» ՍՊԸ-ի աշխատակից Գագիկ Սերյոժայի Կարապետյանին (անձնագիր՝ AT0566302, տրված՝ 18.09.2020թ., 012-ի կողմից)՝

1. Քաղաքային համայնքներում. Շիրակի մարզի, ք. Արթիկի (հասցե՝ Չարենցի փ. թիվ 10/5), ք. Գյումրու (հասցե՝ Մանուշյան փ. թիվ 5/5), Լոռու մարզի Սպիտակ (հասցե՝ Երևանյան խճուղի, 87 հողամաս) և Ալավերդի (հասցե՝ Ջրավազան թաղամաս, 7/1 հողամաս) քաղաքների ՄՍԾ տարածքային կենտրոնների շինարարական աշխատանքների կատարման պատշաճ ընթացքի ապահովմամբ պայմանավորված՝ Նախարարության անունից հանդես գալ քաղաքային բոլոր ստորաբաժանումներում. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում, «Հայաստանի

ՀՀ, Երևան 0010, Կառավարական տուն 3, հեռ.՝ (+374 10) 520 830, www.mlsa.am, info@mlsa.am

էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ում և Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ այլ կազմակերպություններում, և իրականացնել վերոհիշյալ շենքերի նախագծման ճարտարապետահատակագծային առաջադրանքների, շինարարական թույլտվությունների, գազամատակարարման,, ջրամատակարարման, էլեկտրամատակարարման, հեռախոսակապի, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի և այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համաձայնությունների ու թույլտվությունների, տեխնիկական պայմանների, ավարտված շինարարական օբեկտի շահագործման և ավարտական ակտերի ստացման, դրանց վերաբերյալ պայմանագրերի կնքման աշխատանքները՝ ինչպես նաև, այդ նպատակներով հանձնել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր, կատարել այդ աշխատանքների համար նախատեսված համապատասխան վճարումները (տուրքեր, ծառայության վճարներ):

2. Լիազորագիրը տրվում է առանց վերալիազորման իրավունքի և ուժի մեջ է մինչև 2024 թ.-ի ապրիլի 1-ը:

1/9/2024

X

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Signed by: MURADYAN SAMVEL 1104630109

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**13 փետրվարի 2024 թվական, N 19-Ա**

## ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ՝ ՏՎՅԱԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

